# საქართველოს პარლამენტის 2016 წლის 8 ოქტომბრის არჩევნები

## Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրություններ

### ამომრჩეველთა საყურადღებოდ!/Ի՛ ուշադրություն ընտրողների

**კენჭისყრა იმართება 08.00 საათიდან 20.00 საათამდე**
**Քվեարկությունն անց է կացվում ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ը**



კენჭისყრის შენობაში შესვლისას ნაკადის მომწესრიგებელ კომისიის წევრს წარუდგინეთ პირადობის მოწმობა ან საქართველოს მოქალაქის პასპორტი (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) და გაიარეთ მასთან მარკირების შემოწმების პროცედურა

Քվեարկության շենք մտնելիս՝ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը (Վրաստանի բռնազավթված տարածքից հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարիանվածի դեպքում՝ նաև տարիանվածի վկայականը) և նրա մոտ անցե՛ք նշմարման ստուգման ընթացակարգ

***თუ აღმოჩნდა, რომ გაქვთ მარკირება, არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება***
***Եթե պարզվի, որ ունեք նշմարում, ձեզ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք***



მარკირების შემოწმების პროცედურის გავლის შემდეგ მიდით სარეგისტრაციო მაგიდასთან და რეგისტრატორს წარუდგინეთ პირადობის მოწმობა ან საქართველოს მოქალაქის პასპორტი (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა

გაიკეთეთ მარკირება

Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո, գնացե՛ք գրանցման սեղանի մոտ և ընտրողների գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարիանվածի դեպքում՝ նաև տարիանվածի վկայականը)

Անցե՛ք նշմարում

***მარკირებაზე უარის თქმის შემთხვევაში არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება***
***Նշմարման ընթացակարգն անցնելուց հրաժարվելու դեպքում՝ ձեզ թույլ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք***



ამომრჩეველთა სიაში თქვენი გვარის გასწვრივ გააკეთეთ ხელმოწერა

მიიღეთ რეგისტრატორისგან ბეჭდითა და ხელმოწერით დამოწმებული საარჩევნო ბიულეტენები

კენჭისყრის კაბინაში შემოხაზეთ თქვენთვის სასურველი ერთი საარჩევნო სუბიექტის რიგითი ნომერი

Ընտրողների ցուցակում ստորագրե՛ք Ձեր ազգանվան երկայնքով

Ընտրողների գրանցում իրականացնողից ստացե՛ք կնիքով և ստորագրությամբ վավերացված ընտրական քվեաթերթիկները

Քվեախցիկում շրջագծե՛ք Ձեզ համար ցանկալի մեկ ընտրական սուբյեկտի հերթական համարը



თუ დამოუკიდებლად არ შეგიძლიათ შეავსოთ საარჩევნო ბიულეტენი, უფლება გაქვთ, კენჭისყრის კაბინაში დასახმარებლად მოიწვიოთ ნებისმიერი პირი, გარდა საარჩევნო კომისიის წევრისა, კანდიდატისა, საარჩევნო სუბიექტის წარმომადგენლისა, პრესისა და მასობრივი ინფორმაციის სხვა საშუალების წარმომადგენლისა და დამკვირვებლისა

Եթե ինքուրույն չեք կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք օգնելու համար քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի կամ դիտորդի

***თუ გაგიფუჭდათ საარჩევნო ბიულეტენი, მიმართეთ საარჩევნო კომისიის თავმჯდომარეს, გადაეცით გაფუჭებული და მოითხოვეთ ახალი საარჩევნო ბიულეტენი***
***Եթե վնասել եք քվեաթերթիկը, դիմե՛ք ընտրական հանձնաժողովի նախագահին, փոխանցե՛ք վնասվածը և պահանջե՛ք նոր ընտրական քվեաթերթիկ***



კენჭისყრის კაბინიდან გამოსვლის შემდეგ აიღეთ სპეციალური კონვერტი და დაკეცილი საარჩევნო ბიულეტენები მოათავსეთ მასში

სპეციალური კონვერტი მოათავსეთ საარჩევნო ყუთში

Քվեախցիկից դուրս գալուց հետո վերցրե՛ք հատուկ ծրարը և ծալված ընտրական քվեաթերթիկները զետեղե՛ք դրա մեջ

Հատուկ ծրարը գցե՛ք քվեատուփի մեջ

***კენჭისყრაში მონაწილეობის შემდეგ, გთხოვთ, დატოვოთ საარჩევნო უბანი***
***Քվեարկությանը մասնակցելուց հետո հեռացե՛ք ընտրական տեղամասից***

ცესკოს სატელეფონო/საინფორმაციო ცენტრი - 2510051/ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոն - 2510051

Ժողովրդավարության ծառայություն

დემოკრატიის სერვისი

ÐÆØÜ²ÊÜ¸Æð

# 758 ՄԻԼԻՈՆ ԱՆԳՐԱԽԱՆԱ՞Չ



***Որքանով տեղեկացված եմ՝ աշխարհի շատ երկրներում տարրական եւ միջնակարգ կրթությունը պարտադիր է, թեպետ, ինչպես վերջերս հեռուստատեսությամբ լսեցի, աշխարհում շատ մեծ է անգրաճանաչների թիվը: Այդ ուղղությամբ որեւէ վիճակագրություն կա՞:***

***Ի.Պետրոսյան***

***Նինոծմինդա***

Նման վիճակագրություն գոյություն ունի, եւ այդ վիճակագրությամբ մոլորակի առնվազն 758 միլիոն չափահաս բնակիչներ մնում են անգրաճանաչ, նրանց մեծ մասը կազմում են կանայք: Այս տագնապալի վիճակագրությունը տեղ է գտել Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի հարցերի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) նոր զեկույցում, որը ներկայացվեց սեպտեմբերի 6-ին:

Զեկուցագրում նշված է, որ դպրոց չհաճախող երեխաների թիվն աշխարհում հասնում է առնվազն 263 միլիոնի: Նրանց մեկ երրորդը հակամարտությունների շրջաններում գտնվող երեխաներն են:

Ներկայիս միտումների պահպանման դեպքում՝ տարրական կրթության համընդհանուր ընդգրկում ձեռք կբերվի սոսկ 2042 թվականին: Ամենաաղքատ երկրները, սակայն, այդ նպատակին կհասնեն 100 տարի ավելի ուշ, քան ամենահարուստ երկրները:

Ամենածանր բեռը բաժին է ընկել աղջիկներին եւ կանանց: Աֆրիկայի՝ Սահարայից հարավ ընկած երկրներում, աղջիկները, որոնք առավել անբարենպաստ վիճակում են գտնվում, կկարողանան դպրոց հաճախել սոսկ 2086 թվականին, եթե մոտեցումները չփոխվեն:

²èàÔæ²Î²Ü

# ԾԽԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵՑԻ՝ ԳԻՐԱՑԱ



***Ծխելու շուրջ երեսնամյա «ստաժ» ունեմ: Առողջական վիճակիս ելնելով՝ վերջերս ստիպված եղա դրանից հրաժարվել: Սակայն ծագեց մեկ այլ հիմնախնդիր՝ սկսեցի գիրանալ: Ինչպե՞ս վարվել:***

***Ն.Մինասյան***

***Բաթումի***

Նման վիճակում միայն դուք չեք: Սիգարետներից հրաժարումը հաճախ քաշի խիստ ավելացման է հանգեցնում այն բանի հետեւանքով, որ նիկոտինը եւ ծխախոտի ծխի մյուս բաղադրիչները ճնշում են գրելին հորմոնի սինթեզումը, որը պատասխանատու է ախորժակի համար:

«Այն ոչ մեծ հետազոտությունը, որը մենք կատարել ենք, վկայում է, որ ծխելը չափազանց ուժգին է ազդում մարմնի էներգահաշվեկշռի վրա, ինչը կարող է փոփոխություններ առաջացնել՝ օրգանիզմում գրելինի մակարդակի հարցում:

Մեզ անհրաժեշտ է կրկնական հետազոտություններ կատարել մասնակիցների ավելի խոշոր խմբերի վրա եւ հասկանալ, թե մենք ինչպես կարող ենք ճնշել մարմնի քաշի աճը՝ ծխելուց հրաժարվելուց հետո, որպեսզի մարդկանց օգնենք ավելի ակտիվորեն ազատվելու այդ սովորությունից եւ ավելի հազվադեպ վերադառնալու ծխախոտին»,- Աթենքում, Եվրոպայի շնչուղիների մասնագետների ընկերության ամենամյա կոնգրեսում, հայտարարել է Կոնստանտինա Զախարին՝ Աթենքի համալսարանից (Հունաստան):

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# 100 ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ 65 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ՝ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ



***Ճապոնիայում ներկայում 65 հազար 692 մարդ է ապրում, որոնց տարիքը գերազանցում է 100-ը. այս տվյալները երկրի առողջապահության նախարարությունը հրապարակել է՝ «Ծերությունը պատվելու օրվա» նախաշեմին, որը նշվեց սեպտեմբերի 19-ին եւ պետական տոն է: Երկարակյացների ճնշող մեծամասնությունը՝ 88 տոկոսը, կանայք են. 65 հազար մարդկանց թվում միայն 8 հազարն է տղամարդ, իսկ 57 հազարը կանայք են:***

Նախարարությունը երկարակեցության աճի հիմնական պատճառը համարում է բժշկական սպասարկման եւ ամենատարեց մարդկանց գիտակցության բարձր մակարդակը, որոնք աշխատում են ժամանակին դիմել բժշկին: «Ծերությունը պատվելու օրը» առողջապահության նախարարությունն ավանդաբար 100 տարեկան դարձած յուրաքանչյուր բնակչի ուղարկում է արծաթե գավաթ եւ պատվոգիր: Սկզբում գավաթը պատրաստում էին մաքուր արծաթից, սակայն, երկարակյացների աճող թվի պատճառով, այս տարվանից այն փոխարինել են արծաթազօծ գավաթով, ինչը կրկնակի կրճատել է դրա գինը: Չնայած դրան, 100-ամյա հոբելյարներին շնորհավորելու կապակցությամբ, առողջապահության նախարարության ծախսերը կազմում են շուրջ 150 մլն իեն (շուրջ 1,5 մլն դոլար):

ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

# ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ



***Մեկնարկեց նոր ուսումնական տարին: Սկսվեց դպրոցական եռուզեռն ու դրա հետ միասին ավելացան ծնողների հոգսերը՝ կապված երեխաների առողջական վիճակի հետ: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում առողջապահության ոլորտի մասնագետների խորհուրդները, որոնք կարող են օգտակար լինել դպրոցական երեխա ունեցող ծնողների համար:***

«Դպրոցական երեխաների առողջական վիճակը պայմանավորված է մի շարք գործոններով: Դպրոցը պետք է լինի այն միջավայրը, որը ոչ միայն կապահովի կրթական մակարդակը, այլեւ կճառայի որպես առողջ միջավայր՝ երեխայի աճի ու զարգացման համար: Երեխայի օրգանիզմի զարգացման համար կարեւորագույն դեր ունեն դպրոցական կահույքն ու պարագաները. հիմնականում՝ դպրոցական պայուսակը, կոշիկը, սենյակի լուսավորությունը, օդափոխությունը եւ այլն:

Կարեւոր է՝ դպրոցականների՝ տանը եւ դպրոցում նստարանի առջեւ ոչ ճիշտ դիրքով նստելը, ինչի պատճառը հաճախ լինում է տարիքին եւ դպրոցականների հասակին նստարանների չափսերի անհամապատասխանությունը: Աշակերտական նստարանը պետք է լինի հարմար՝ գործառնական չափերով այն պետք է համապատասխանի, երեխայի տարիքին բնորոշ, անթրոպոմետրիկ ցուցանիշներին: Ուսումնական պարապմունքների ժամանակ պետք է ապահովել երեխայի մարմնի ճիշտ դիրքը նստած վիճակում՝ ինչը ապահովում է ծանրության հավասարաչափ բաշխումը ողնաշարի վրա: Առողջության պահպանման եւ ճիշտ կեցվածքի ձեւավորման նպատակով՝ անհրաժեշտ է հանրակրթական հաստատություններում, ուսուցման առաջին իսկ օրվանից, սովորողներին դաստիարակել եւ նրանցում ձեւավորել ճիշտ աշխատանքային դիրք՝ աշակերտական նստարանի մոտ: Բացի այդ, սովորողներին պետք է ցույց տալ՝ ոչ ճիշտ նստելու դեպքում կեցվածքի շեղումները ցուցադրող աղյուսակներ:

Գրելիս եւ կարդալիս աշակերտի ճիշտ դիրքի պահանջներն են.

1) գլխի թեթեւակի հակում դեպի առաջ, էջից աչքերի 35-40 սմ հեռավորություն,

2) սեղանին հենված նախաբազուկներ, սեղանից իրանի 3-5 սմ հեռավորություն,

3) ոտնաթաթերի հենում հատակին կամ նստարանի հորիզոնական պայտին,

4) ոտքերի ծալում ծնկային եւ կոնքազդրային հոդում ուղիղ անկյան տակ,

5) ազդրի 3/4-ը պետք է գտնվի նստատեղի վրա,

6) ողնաշարը գոտկային մասով պետք է հենվի նստարանի թիկնակին:

Այս դիրքը կոչվում է ուղիղ նստեցում, որը, հիգիենիկ առումով, աշակերտի համար ամենից ճիշտն է եւ՝ ամենահարմարը:

Դպրոցական միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցությունն աճող օրգանիզմի վրա կարող է հանգեցնել հենաշարժիչ համակարգի (կեցվածքի) ֆունկցիոնալ շեղումների՝ ողնաշարի սկոլիոզների, լորդոզների եւ կիֆոզների: Սկոլիոզը հենաշարժողական ապարատի հիվանդություն է, որին բնորոշ է ողնաշարի ծռումը դեպի կողային հատված: Այն կարող է լինել բնածին ու ձեռքբերովի: Կարեւոր է մշտական շարժողական ակտիվությունը՝ ներառյալ մարմնամարզությունը: Մարմնի ուղղաձիգ դիրքում պահող մկանների վարժեցումը նպաստում է ճիշտ կեցվածքի զարգացմանը:

Շատ կարեւոր է ճիշտ պայուսակի ընտրությունը. խորհուրդ է տրվում օգտագործել ուսապայուսակներ եւ ոչ փափուկ ուսապարկեր՝ հատկապես ցածր դասարաններում: Տարրական դասարաններում սովորող երեխաների համար՝ դպրոցական պայուսակի քաշը պետք է լինի ոչ ավելի, քան 600-700 գրամ: Դպրոցական պայուսակի քաշը չպետք է գերազանցի աշակերտի քաշի 10%-ը: Անհրաժեշտ է դպրոցական պայուսակը կրել այնպես, որպեսզի ծանրությունը հավասարաչափ բաշխվի մարմնի վրա: Եթե պայուսակը ձեռքին են կրում, ապա չի կարելի այն անընդհատ նույն ձեռքով բռնել:

Երեխաների առողջության համար կարեւոր է ձեռքերի եւ մաշկի հիգիենան: Հիգիենայի պահպանումը կարող է զերծ պահել մի շարք վարակիչ հիվանդություններից»:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Փնտրիր բարին ամենուրեք ու երբ գտնես, դուրս բեր թաքստոցից, եւ թող նա լինի ազատ ու աներկյուղ...

***ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ***
***(1908-1981)***
***Ամերիկահայ գրող***

Թե մոտիկդ է քո թշնամին՝ թշնամի է նա առավել:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց բանաստեղծ***

Սովորեցնելով ուրիշներին՝ սովորում ենք մենք ինքներս:

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա. 4-65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Միայն անազնիվ մարդն է ընդունակ առերես գովել, իսկ հետեւից՝ չարախոսել:

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)***
***Անտիկ հին հույն բժիշկ, փիլիսոփա***

Բարեկամությունը ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է անվստահությունը:

***ԴԵԿԱՐՏ***
***(1596-1650)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Կրքերը խելք են տալիս ամենահիմար մարդկանց եւ հիմարացնում են ամենախելացիներին:

***ՆԻՑՇԵ***
***(1844-1900)***
***Գերմանացի փիլիսոփա***

Միայն կատարված քայլերն են ինչ-որ բան փոխում: Եթե ոչ մի քայլ չի կատարվում, ապա ամեն ինչ մնում է այնպես, ինչպես նախկինում:

***Ա.ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ²ÜºÎ¸àîÜºð

*☺ Տեր Աստված, մարդկանց խելք տուր, ոմանց էլ՝ դրանից օգտվելու ցուցումներ:*

*☺ Բժիշկը՝ հիվանդին.*

*- Ձեզ չի կարելի ծխել, խմել, պատահական սիրային կապեր ունենալ...*

*- Բժիշկ, անկեղծորեն ասեք, իմ կինը արդեն եղե՞լ է ձեզ մոտ:*

*☺ Մայրիկ, իրեն հայրիկը գալիս է: Առաջինը ի՞նչը ցույց տանք՝ իմ օրագի՞րը, թե՞ քո նոր հագուստը:*

*☺ Ընդհանրապես, հյուրերը լինում են երկու տեսակի՝ մի մասը շտապում է տուն վերադառնալ, իսկ մյուսը՝ որքան հնարավոր է շատ մնալ: Զարմանալին այն է, որ երկու տեսակները միմյանց հետ կապված են ամուսնական կապով:*

*☺ Կինը՝ ամուսնուն.*

*- Այսօր եղա գուշակի մոտ: Դու գործուղման չե՛ս գնալու:*

*- Ինչո՞ւ, վատ բան է լինելու:*

*- Ոչ, ընդհակառակը, քեզ համար շատ լավ է լինելու...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ` ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի անկախության 25-րդ տարեդարձի առթիվ, այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն` հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին:*

Հայաստանի նախագահին ուղեկցում էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ եւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Նախագահ Սարգսյանը հավաքվածներին շնորհավորեց Հայաստանի անկախության 25-րդ տարեդարձի առիթով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ` ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ



*Սեպտեմբերի 21-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հանդիպում ունեցան Սփյուռքում գործող մի շարք կառույցների ղեկավարների հետ եւ քննարկեցին համահայկական նշանակություն ունեցող տարբեր հարցեր: Հանդիպմանը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին է հանձնել Տիգրան Մեծի շքանշան` Արցախի պետականության կայացման եւ ամրապնդման, համազգային նշանակության կարեւորագույն խնդիրների լուծման գործում ներդրած նշանակալի ավանդի եւ անմնացորդ նվիրումի համար:*

## ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

Զորահանդեսին տրիբունայից հետեւում էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, օրենսդիր եւ գործադիր մարմինների անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, զինվորականներ, հոգեւորականներ, այլք:



Զորահանդեսի ընթացքում` հանդիսավոր երթով անցան Հայաստանի Զինված ուժերի ստորաբաժանումները:

Այնուհետեւ` երկինքը հայոց եռագույնի գույներով ներկեց գրոհային ինքնաթիռների խումբը, որոնց հետեւեցին ինքնաթիռների մարտակարգերը: Հրապարակ` ռազմական տեխնիկայի մուտքի մեկնարկ տվեցին հետախուզական եւ մոտոհրաձգային ստորաբաժանումները: Ծանր զրահատեխնիկան բերվեց հատուկ քարշակների վրա: Դրանց հետեւեցին հրթիռային եւ հրետանային զորքերի ստորաբաժանումները, իսկ այնուհետեւ հրապարակ բերվեցին հայկական արտադրության անօդաչու թռչող «Կռունկ» սարքերը:



Այնուհետեւ` հրապարակ բերվեցին հակատանկային ինքնագնաց կայաններ, թնդանոթներ, «Գրադ», «Թայֆուն», WM 80, «Սմերչ», «Կոնկուրս» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, «Տոչկա Ու», «Սքադ» տակտիկական հրթիռային համալիրներ, «Իսկանդեր» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրը: ՀՕՊ ուժերը ներկայացված էին հայրենական ձեռնարկություններում արդիականացված «Օսա-ԱԿ(Մ)» համալիրներով, «Ս 125», «Ստրելա 10», «Բուկ» զենիթահրթիռային արդիականացված համալիրներով, Ս-300 հրթիռային համալիրներով, որոնք հատուկ հարմարեցված են լեռնային տեղանքին:

Զորահանդեսը եզրափակեցին պատվո պահակային վաշտը եւ ԶՈՒ միացյալ փողային նվագախումբը:

## ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ



*ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին, ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի եւ անձամբ իր անունից, շնորհավորական ուղերձ է հղել հայ ժողովրդին` Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ: Ուղերձում, մասնավորապես, ասված է.*

*«Միացյալ Նահանգները շատ կարեւորում եւ գնահատում է Հայաստանի հետ մեր ջերմ բարեկամությունը: Անցած քառորդ դարի ընթացքում Հայաստանը լուրջ առաջընթաց է արձանագրել, եւ իմ կառավարությունը նախատեսում է շարունակել ձեզ հետ սերտ աշխատանքը` աջակցելով երկկողմ բարգավաճմանը, ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանը, օրենքի գերիշխանությանը եւ տարածաշրջանային խաղաղությանը:*

*Մենք բարձր ենք գնահատում` Հայաստանի կայուն աջակցությունը միջազգային խաղաղարար գործընթացներին եւ` Սիրիայի փախստականների ճգնաժամի կարգավորման մեջ, երկրի առաջատար դերը: Մենք նաեւ բարձր ենք գնահատում Միացյալ Նահանգներում կայացած եւ կենսունակ հայ համայնքի ներկայությունը:*

*Այս հատուկ առիթով` ես լավագույն բարեմաղթանքներն եմ հղում բոլոր հայերին` մաղթելով խաղաղ եւ բարգավաճ տարի»:*

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

*Սեպտեմբերի 22-ին, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների, Հայաստանի գյուղատնտեսության, Հայաստանի ֆինանսների, Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարությունների աշխատակազմերին է ներկայացրել նորանշանակ նախարարներին:*



Մասնավորապես, Կարեն Կարապետյանը ներկայացրեց Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նորանշանակ նախարար, 48-ամյա Աշոտ Մանուկյանին, Հայաստանի գյուղատնտեսության նորանշանակ նախարար, 44-ամյա Իգնատի Առաքելյանին, Հայաստանի ֆինանսների նորանշանակ նախարար, 41-ամյա Վարդան Արամյանին, Հայաստանի տրանսպորտի եւ կապի նորանշանակ նախարար, 54-ամյա Վահան Մարտիրոսյանին:

## ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ` ՌԻՈՅԻ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ



*ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պարգեւատրել է Ռիոյի օլիմպիական խաղերում մեդալներ նվաճած հայ մարզիկներին:*

Ռիո դե Ժանեյրոյում կայացած Օլիմպիական 31-րդ ամառային խաղերում տարած փայլուն հաղթանակի եւ Հայաստան աշխարհին ըստ արժանավույն ներկայացնելու համար` հունա-հռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը, հունա-հռոմեական ոճի ըմբիշ Միհրան Հարությունյանը, ծանրորդներ Սիմոն Մարտիրոսյանը, Գոռ Մինասյանը պարգեւատրվել են «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով:

Հայաստանի նախագահի հրամանագրերով պարգեւատրվել են նաեւ ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը, ՀԱՕԿ գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը, ինչպես նաեւ հայ օլիմպիականների մարզիչները:

Պարգեւատրման արարողությունից հետո, իր ելույթում, Հայաստանի նախագահը սրտանց շնորհավորեց ներկաներին` Ռիոյի օլիմպիական խաղերում հայ մարզիկների ունեցած հաջողության համար:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց հայ օլիմպիականներին, ՀԱՕԿ-ի աշխատակազմին` նախագահ Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ:

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ` ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ

*Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունում, «Ուսուցչի օրվան» ընդառաջ, անցկացվեց «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների հանրապետական փուլը: Ըստ ավանդույթի` հաղթողների անունները կհրապարակվեն հոկտեմբերի 5-ին` «Ուսուցչի օրը» հանդիսավոր արարողության ժամանակ: Կպարգեւատրվեն 3 անվանակարգում հաղթած մանկավարժները: Տարվա լավագույն ուսուցչին եւ դաստիարակին ավտոմեքենաներ կհանձնվեն: Տարվա լավագույն տնօրենը, որպես մրցանակ համակարգիչ կստանա: Վաստակավոր մանկավարժներին կհանձնվեն Հայաստանի պետական պարգեւներ, Հայաստանի վարչապետի «Հուշամեդալ» եւ շնորհակալագրեր:*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 2,4 ՏՈԿՈՍ

*Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2016 թվականի հունվար-օգոստոսին, 2,4 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:*

Այս տարվա օգոստոսին, հուլիսի համեմատ, ցուցանիշն աճել է 28,2 տոկոսով:

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը` անկում է գրանցվել շինարարության, առեւտրի շրջանառության ոլորտներում: 2015թ. հունվար-օգոստոսի համեմատ, ընթացիկ տարում, ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 8 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը` 4,1 տոկոսով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ



*24.09.2016. Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի, Աղոկտոսի եւ Ռոմանոս Երգեցողի հիշատակության օր*

Սուրբ Գեւորգը Կապադովկացի բարեպաշտ քրիստոնյա ընտանիքի զավակ է: Զինվորագրվելով հռոմեական բանակին, իր ցուցաբերած քաջության եւ հավատարմության շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում, արժանացել է հազարապետության պատվին: Կայսեր հրավիրած խորհրդակցության ժամանակ՝ ընդդիմացել է քրիստոնյաներին հալածելու նրա ծրագրին՝ բացահայտելով իր քրիստոնյա լինելը: Կայսրը, տեղի ունեցածից զարմացած ու ապշած, բանտարկել է սրբին՝ ենթարկելով անլուր չարչարանքների: Սուրբ Գեւորգի քարոզների շնորհիվ՝ շատերը դարձի են եկել, որոնց թվում էր նաեւ Ալեքսանդրիա թագուհին: Կայսեր բազում թախանձանքներից հետո՝ Գեւորգը վերջապես համաձայնում է կուռքերին զոհ մատուցել: Սակայն, հասնելով կռատուն՝ մեկառմեկ ջարդում է բոլոր կուռքերը՝ ցույց տալով դրանց սուտ եւ սին լինելը: Այս հանդուգն արարքի համար Դիոկղետիանոս կայսրը 303 թվականին գլխատել է տալիս Սուրբ Գեւորգին:

*25.09.2016. Վարագա Սուրբ Խաչի տոն*

ՋԻՎԱՆԻ - 170

# ՍՐԱՀՈՒՄ ՄԵԾՆ ԱՇՈՒՂԻ ՀՄԱՅԻՉ ՈՒ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԵՐԳԵՐԻ ՇՈՒՆՉՆ ԷՐ

***Թբիլիսիի «Հայարտուն» կենտրոնում կայացան Մեծն աշուղ Ջիվանուն նվիրված «Բարի, գեղեցիկ, առաքինի» վերտառությամբ եւ թբիլիսաբնակ երաժիշտ ու նկարիչ Արտյոմ Ալաբուլյանցին նվիրված վավերագրական ֆիլմերի պրեմիերաները:***

Միջոցառումը, որին ներկա էին Թբիլիսիի հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, Ջիվանու երգի ու արվեստի երկրպագուներ, բացեց եւ ներկաներին ողջունեց «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը:

Ֆիլմերի ռեժիսորը երեւանցի ճանաչված կինոռեժիսոր Արմեն Ռոնով-Մկրտչյանն է, սցենարի հեղինակը եւ պրոդյուսերը՝ Ռիտա Շառոյանը: Ջիվանուն նվիրված ֆիլմում երգերի կատարումով հանդես են գալիս Հայաստանի «Սայաթ-Նովա» աշուղական համույթի ղեկավար, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը եւ համույթի քամանահար, աշուղ Րաֆֆին:

Ֆիլմը պատմում է Ախալքալաքիի Կարծախ գյուղում ծնված, Ալեքսանդրապոլում ու Թիֆլիսում զրկանքով ու չարքաշ կյանքով ապրած եւ գրեթե հազարից ավելի երգեր ստեղծած աշուղի ու նրա քամանի նվագարանի մասին: Ասենք նաեւ, որ աշուղ Ջիվանու երգերի թիվը հազարից ավելիի է հասել համույթի ղեկավար, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի պրպտուն ջանքերի ու տքնաջան աշխատանքի շնորհիվ:

Ապա ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին նույն կինոռեժիսորի՝ թբիլիսաբնակ երաժիշտ եւ նկարիչ Արտյոմ Ալաբուլյանցին նվիրված վավերագրական ֆիլմը:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

ՍԱՀՄԱՆ

# «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ» ԿԱՄՈՒՐՋԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿՀԱՆՁՆՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

***Հայաստանի եւ Վրաստանի միջեւ պետական սահմանի «Սադախլո-Բագրատաշեն» անցակետի տարածքում տեղի ունեցավ՝ Դեբեդ գետի վրա նոր կամուրջ կառուցելու նպատակով ստեղծված, վրաց-հայկական աշխատանքային խմբի հանդիպումը, կամրջի շինարարության մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած, մեկ տասնյակից ավելի ընկերությունների ներկայացուցիչների հետ:***

Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը, Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի ղեկավարի տեղակալ Նուգզար Գասվիանին, ոլորտի այլ մասնագետներ:

Հանդիպմանը ներկա չինական, իրանական, հայկական եւ այլ կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչները տեղում ծանոթացան կամրջի կառուցման տեղանքին եւ տեխնիկական առանձնահատկություններին վերաբերող խնդիրներին, որից հետո երկու երկրների մասնագետները պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին, պարզաբանեցին շինարարության հետ կապված առաջնահերթությունները:

Նոր կամուրջն ունենալու է երկու առանձին թռիչքային ծածկ, որոնք միացնելու են Դեբեդ գետի հայկական կողմի առկա սահմանային անցակետի ենթակառուցվածքը վրացական կողմի ենթակառուցվածքին: Այն ունենալու է չորս երթեւեկելի գոտի, որն ավելի կդյուրացնի երկու երկրների բեռնափոխադրումների եւ ուղեւորափոխադրումների սպասարկման որակը, կապահովի ժամանակի խնայողություն, անվտանգ ու հարմարավետ շարժ՝ սահմանային անցակետերով: Մրցույթի առաջին փուլը բաղկացած կլինի միայն տեխնիկական առաջարկից: Վրաստանի Ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի ղեկավարի տեղակալ Նուգզար Գասվիանին այս նախագիծը որակեց որպես բացառիկ եւ յուրահատուկ:

«Համոզված եմ, որ տարածաշրջանի համար բացառիկ նշանակություն ունեցող այս նախագիծը կիրականացվի սահմանված ժամկետներում: Հայ-վրացական Բարեկամության կամուրջը պետք է օրինակ ծառայի այլ երկրների համար»,- ասաց նա: Կամրջի կառուցման, նախագծման եւ շինարարության արժեքը մոտ 9 միլիոն եվրո է, որի կեսը ֆինանսավորելու է վրացական կողմը: Ծրագիրը իրականացվելու է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) վարկային միջոցներով: Նշենք նաեւ, որ, սահմանային անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման աշխատանքները համակարգելու նպատակով, ստեղծված է հայ-վրացական միջկառավարական հանձնաժողով, որի անհատական կազմը հաստատել են Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի կառավարությունները:



*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Ստոր, արժանապատվությունից զուրկ: 8.Չափ, լիմիտ: 10.Վարդազգիների ընտանիքին պատկանող պտուղ: 11.Առավոտ շուտ, կանուխ: 13.Մեծ Հայքի Արշակունի թագավոր՝ Խոսրով ...: 14.Նահանգ ԱՄՆ-ում: 16.Աման, սկավառակ: 17.Կաշվից, մորթուց հագուստեղեն կարող արհեստավոր: 18.Ադամի առաջին կինը: 20.Փորձանք (բրբ.): 21.Ցուցական դերանուն: 22.Գրկաչափ, շալակ: 26.Երկրագնդի ամենամեծ աշխարհամասը, որը Եվրոպայի հետ կազմում է Եվրասիա մայրցամաքը: 28.Որոշ վճարով ուղեւորներ փոխադրող ավտոմեքենա: 31.Թիֆլիսում ստեղծագործող հայ գրող ...-Դոս: 32.Փայտե աման, որ իբրեւ չափ էր ծառայում հացահատիկի համար: 34.Երկու տասնյակ: 35.Հոգեւորական: 36.Պեպոյի բարեկամներից: 38.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Իսրայել ...: 41.Հավերժ: 43.Հայկական աստվածուհի, որին վերագրվում է հնդկական ծագում: 45.Լատինաամերիկական պար: 48.Ըստ Աստվածաշնչի՝ Համաշխարհային ջրհեղեղից հետո «նոր մարդկության» նախահայրը: 49.Հրաբխից դուրս ժայթքող բոցավառ նյութ, մագմա: 52.Փոքրիկ կուժ: 53.Սերտելու համար տրված նյութ: 54.Հարյուր տարի: 55.Օպերային մեներգ: 56.Նվեր, պարգեւ: 57.Բրազիլացի ֆուտբոլիստ: 58.Գործի ձայն: 59.Խոշոր, հսկա: 60.Մարզական կոլեկտիվ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քաղաք Փոքր Հայքում: 2.Փոքր գետակ: 3.Մզարան, առագաստ: 4.Փոքրիկ ապակյա անոթ՝ շշիկ: 5.Մատնիչ, անհավատարիմ: 7.ԽՍՀՄ առաջնորդ: 9.Կլիմա: 12.Զգացմունք: 15.Երգչուհի ...Դոլինա: 19.Ընտիր, բարձրակարգ: 23.Պարատեսակ: 24.Հայոց թագավոր 338-350թթ.: 25.Ալկոհոլային խմիչք, որը ստացվում է խաղողի հյութի խմորումից: 27.Դրամ, մետաղադրամ կամ թղթադրամ: 29.Անտառակաքավ, դահուճ: 30.Ջրլող թռչուն: 32.Արեւի գլխարկ: 33.Խոշոր աման, լագան: 37.Բրիտանական ռոք խումբ: 39.Քոլեջ-նախակրթարան՝ Երեւանում: 40.Ըստ ավանդության՝ Սուրբ Հռիփսիմեի քրիստոնյա կույսերի միաբանության մայրապետը: 41.Ավստրալո-ամերիկյան դերասան, ռեժիսոր ... Գիբսոն: 42.Ճապոնական էլեկտրատեխնիկայի ֆիրմա: 44.Մեղսավոր ու այլասերված, կործանված քաղաք (ըստ Աստվածաշնչի): 46.Հողի մակերեսի չափման միավոր: 47.Կրակի ջերմություն, բոց: 50.Ավանդական սովորույթ: 51.Հանրահայտ հայ կոմպոզիտոր, համաշխարհային դասական ... Խաչատրյան:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գանձեւ: 6.Անրի: 9.Երվանդ: 11.Խլահավ: 13.Յարա: 14.Լա: 15.Արենի: 19.Ռենտա: 20.Յուրի: 21.Տարի: 22.Երեմ: 23.Դի: 24.Նիկո: 27.Մկրատ: 28.Սոնա: 30.Մեա: 32.Վար: 33.Տիգիան: 36.Դար: 37.Տիրանա: 40.Հաազա: 42.Ալ: 43.Մսակեր: 44.Արազ: 47.Ամա: 48.Լեո: 50.Գա: 52.Արշակ: 53.Դոդիչ: 55.Նռան: 57.Բադ: 58.Դրա: 59.Զանի: 60.Որբ: 61.Կամ: 62.Նպատ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ադամ: 3.Գդալ: 4.Սե: 5.Կայեն: 6.Ադրիատիկ: 7.Իորի: 8.Փխենյան: 10.Նանտ: 12.Վազգեն: 15.Առնետ: 16.Րե: 17.Մարիամ: 18.Սիմոն: 23.Դմանիս: 25.Իսահակ: 26.Կոր: 29.Շիրազ: 30.Մի: 31.ԵԱՍՏ: 33.Տա: 34.Բակ: 35.Յար: 36.Դարակազմ: 38.Րաֆֆի: 39.Նենգ: 41.Գամառ: 45.Սեդա: 46.Բարդի: 47.Աշնակ: 49.Որդան: 51.Արաբո: 54.Չլոտ: 56.Նա: 57.Բիգ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445